

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

17.11.2013թ.

գ. ՀԱՑԻԿ

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հացիկի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 125 կարգադրության, աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետի տեղակալ Գագիկ Եղիազարյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջին կարգի մասնագետ Մարինե Վարդանյանի, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Հացիկի գյուղական համայնքի ղեկավար Կարեն Պետրոսյանի Հացիկի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հոկտեմբերի 30-ին և ավարտվել՝ 2013 թվականի նոյեմբերի 12-ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի օգոստոսի 4-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի օգոստոսի 9-ի արտահերթ նիստի քննարկմանը /ավագանու որոշում թիվ 26-Ն/: Մշակվել և գործողության մեջ է դրվել միջոցառումների ժամանակացույց և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել տեղեկանքում արձանագրված համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման գործում տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:

1) Համայնքի նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնել է 2012 թվականի նոյեմբեր ամսին և օրենսդրությամբ սահմանված ժամկետում ընդունել է իր կանոնակարգը /14.12.2012թ. արձանագրություն թիվ 8, որոշում թիվ 13-Ն/ և ուժը կորցրած է ճանաչել ավագանու կանոնակարգը ընդունելու վերաբերյալ ավագանու նախորդ որոշումը /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 16-րդ հոդված 1-ին մաս/: